

ԱՂՑԱՆՆԵՐ

Մի օր դպրոցից տուն գալով Արմինեն գտավ մոր թողած նամակը, որում նա խնդրում էր աղցան պատրաստել: Արմինեն գիտեր, որ աղցանը երկու կամ ավելի բաղադրիչների խառնուրդ է, և նրա համար բարդ չէր մոր խնդրանքը կատարել: Բայց Արմինեն ուզում է մաթեմատիկոս դառնալ և որոշեց հաշվել, թե տվյալ մթերքներից (մայրնեգ, վարունգ, լոլիկ) քա՞նի տարբեր աղցան կարելի է պատրաստել: Կարճատև հաշվարկներից հետո նա ստացավ անհրաժեշտ պատասխանը 4:

Իմանալով, որ դուք սիրում եք հետաքրքրաշարժ խնդիրներ և ուզում եք ծրագրավորող դառնալ, Արմինեն ձեզ խնդրեց գրել ծրագիր, որը կորոշի տարատեսակ աղցանների քանակը բաղադրիչների տրված թվի դեպքում:

Մուտքային տվյալներ

Մուտքում տրված է n ($n < 32$) բնական թիվը՝ աղցանի համար անհրաժեշտ բաղադրիչների քանակը:

Ելքային տվյալներ

Պետք է արտածել խնդրի պատասխանը:

Օրինակներ

| N° | stdin | stdout |
|----|-------|--------|
| 1 | 3 | 4 |
| 2 | 4 | 11 |